12. ՏՈԼՎԱԹ ԽՈՒՇԻՆ

Կէղնի, չէղնի մարդմ կէղնի, թե ի՞նչ կէնե, ըռնչպարութեն է, կուշտ շուտե։

Մնաց օր հ՝ելավ կարդվավ լէ, էղավ կնիկ ու ճժու տեր։ Էդոր իդարեն ուր էրկու իշու վրեն է։ Էրկու էշ կեր՝ կէրթար սար, փետ կկտրեր, բերեր քաղաք ծախեր, զուր իտարեն կէներ։

Օր մը չէ, էրկուս չէ, հ՝ըմնօր էդ էր ուր հալ։ Օր մը լէ սարեն էկավ, տեսավ օր տղե մէ էղի ուրին։ Տեսավ օր մեկ լէ հ՝եվելցավ, հ՝իրկուն վերցուց կնկան ասեց.

— Կնիկ, հար հըմկա էրկու նաֆս էնք, իդարա չէնենք, մեկ լէ հ՝եվելցավ, մըր իդարեն իմա՞լ կէղնի։

Կնիկն ասեց.— Մարդ, դու էտո՞ր ապով է տուշունմիշ կէղնիս. աստված օր բողազըմ ծակե, հալբաթ ղէնտոր ըռըղխ լէ կիտա։

Հ՝եկուց սորա եբ կէրթեր սար, զէրկու էշ կբառներ, շալակ մը լէ ինք կշալկեր, կասեր՝ «Տանիմ, ի՞նչ էնինք, էղանք քուլֆըթի տեր, իմ էրեխեն անոթի չմնա»։

Հ՝ընցավ ժում մը, մեկ լէ էդ մարդ սարեն կիգեր, էկավ ի՞նչ տեսնա աղեկ է, տեսավ օր կնիկ պառկեր է տղեմ ի էղի։

Հ՝իրկուն օր դառձավ էկավ, խաչկվավ, կանավ։

— Ըհը կնիկ, ես իմա՞լ էնիմ հորես բաց, հար էսօր իրեք ենք, հըմկա մեկ լէ էղավ, էղանք չորս։

Կնիկն ասեց.— Մա՛րդ, մըր ձեռքն է՞, աստծու ձեռքն է, աստ-

վածն է տվի, իմալ օր տվեր է, հըմալ լէ կպահե, չէղավ՝ մենք քի-չըմ պակաս կուտինք, կելնի էնդոր բոըզխ կէրթա։

Լուսուն հ՚ելավ մեկ լէ զուր իշվանք ասմրեց, կէրթեր սար, պզտիկ տղեն էփեի փորքեր էր, լաց, հ՚ընկավ հետևեն։

— Արո՛, ես լէ կիգամ,— ասեց։

Մարդ դարձավ ասեց.— Լաո՛, դու հ՚ուր կիգաս, դըռ դու պըզ-տիկ իս, դու մանցի տուն։

Ինչ օր էրեց, չկառցավ վըր տղին, լաց, հ՚ընկավ պապու հե-տևեն։

Պապ ջանդարդի էղավ, ասեց. «Կանի ըզտղեն չլացում, կտա-նիմ հետս, էնդիեն քիչմ փետ պակաս կշալկիմ, կդնիմ թեթվաչրիկ, բերիմ»։ Շալկեց գնաց։ Եբ հասավ պրակի մեջ, ղիշվանք թողեց չայիր, տղին ասեց.

— Լաո՛, դու կանի իշվանու հ՚առջև, ես կէրթամ փետ կտրիմ, տորա կիգամ առնիմ ըղքըըկ, էրթամ։

Պապն օր գնաց, տղեն տեսավ օր էդ ծառու վրեն հավքու բուն կա. պզտիկ ու սատանա, շմփլավ, հ՚ելավ ծառ, բնի միջու հավկիթ վերուց, դրեց ծոցք ու հ՚իջավ, էկավ կանավ իշվնու հ՚առջև։

Մարդ զփետ կտրեց, էկավ օր ղիշվանք տաներ, բառներ։ Տը-ղեն ասեց.

— Աբո՛, տես ես հավկիթ մ՚իմ գտի, ինչ խդար խորոտիկ է։

Պապն իշքեց, օղորդ օր խորոտիկ էր, մարդու քանի օր պիտեր, ուտեր խմեր, թամաշա էներ։ Տարավ զիշվանք, բառցավ ղուր բեռ-ներ, ըզտղեն դրեց վըր իշուն ու քշեց էկավ ուր տուն։

Օր էկավ տուն, զտղեն թողուց տուն, ասեց.

— Իշվանք քշիմ մեյդան, զփետ ծախիմ ու դառնամ հ՚իգամ։

Էդ մարդ օր գնաց փետ ծախելու, տղեն մամուն ասեց.

— Մարե, արի ես բանմ իմ գտի սար, բերի, մանի հավկիթ ու չմանի։ —Հանեց ցուցուց մամուն, օղորդ օր տղի ասած հավկիթ էր ու հավկիթ չէր։

Սեր հ՚ելավ առավ տղի ձեռքեն զէգ հավկիթ ու քշեց շուկնե։ Տարավ շուկեն օլըրցուց, գուքընդարըմ էն դիեն ճանչցավ, կանչեց, ասեց.

— Մորքո՛ւր, մորքո՛ւր, հինգ ոսկի կիտամ, զէդ հավկիթ տուր ընձիկ։

Կնիկն ասեց.— Ես ֆուխարա իմ, էնոքի զիս տնազ կէնիս, դը՞ գնա էնդին։

Կնիկ քիչըմ հեռեցավ գնաց, մեկ լէ կանչեց, ասեց.

— Ի՜, տաս օսկի կիտամ։

Կնիկն չար գիներ զէդ հավկթի խրմաթ, բըլե դուքընդրներ շահրիստանի մարդ են, ճանչցած են։

Հ՚ելավ գնաց էդ հաղ ուրիշ տեխրմ։ Դուքընդարրմ տեսավ, ասեց.

— Մորքուր, էդ ի՞նչ է կծախիս։

Կնիկն ասեց.— Դրհ գնա էնդին, ի՞նչ քու բանն է ինչ կծախիմ, դո՞ւ լէ կուղիս իմ վրեն ծիծղաս։

Մարդն ասեց.— Ջանըմ, հ՚որի քու վրեն պիտի ծիծղամ, էկո էրթանք դուքան, տեսնանք ի՞նչ է կծախիս։

Առավ գնաց դուքան, հավկիթն օր տեսավ, էլ կնկա յախեն չթողեց, ասեց.

— Մորքուր, քսան օսկի կիտամ, զէդ հավկիթ տուր ընձիկ։

Կնիկն ասեց.— Ջանրմ, ղիս հ՚որի՞ տնազ կէնիք։

Մարդն ասեց.— Տնազ էնող, զուր ազիզ տնազ էնե, հ՚որի՞ ըղքրիկ տնազ պիտի էնիմ, սրտես կասիմ,— ու հանեց ըզքսան օսկին հաշվեց, յցից կնկա լրփի մեջ, դարձավ ասեց.— Էտորնե էլ կա, բի կառնիմ։

Կնիկն ասեց.— Հ՚ուստե կէղնի հոկուց ընձիկ, զէդ լէ իմ տըղեն գացեր է սար ուր պապու հետ են առի էկի։

Առավ զփարեն կնիկն, դառձավ էկավ տուն։ Էկավ տուն, տեսավ օր իրիկ լէ ըղփետ ծախեր է էկեր է տուն։

Ասեց.— Մարդ, զէն հավկիթն օր տարա շուկեն, ծախի քսան օսկի տվին, ասին՝ «Հոկուց էլ կա, բի, մենք կառնինք»։

Էդ մարդ մեկ լէ հ՚ելավ լուսուն օր զիշվանք տվեց հ՚առեջ կէրթեր, տղեն լաց, հ՚ընկավ հ՚ետևեն, իլայի քի՝ ես լէ կիգամ։

Լաց օր հ՚ընկավ հ՚ետևեն, պապն ասեց.

— Լաո՜ ես զիմ բեռներ շարաշվիմ, թը չէ ըզքզիկ, երեկ տարա, հ՚էսօր էլ հ՚որի՞ կիդաս։ — Ինչ էրեց, տղի վրեն չկառցավ, քիչմը տեխ օր գնաց, տեսավ տղեն հ՚ետևեն չկտրի, ասեց. «Ջանրմ, զիմ տղեն չլացում. երեկ տարա հ՚ըմալ բանմը գտավ, օր աշխարքի մեջ չըր էղի, էրեխա խսմթին ըռըղխով կէղնի, կդնիմ վըր իշուն, առնիմ էրթամ»։ Վերուց դրեց իշու կուդման ու առավ հետ գնաց։ Գնաց, օր հասավ մեջի պռուկ, զիշվանք թողեց չայիր, տղին ասեց.

— Լաո՜, ախր դու հ՚ըմնօր էղեր իս պատիճ ընձիկ, կանի հ՚ոդա իշվնու հ՚առջև, ըզփետ կտրիմ, հ՚իգանք տանինք, բառնանք էրթանք։

Տղեն մնաց իշվանու հ՝առեջ, պապ գնաց փետ կտրելու։ Պապն օր գնաց, չէ՞ տղեն զծառ նշներ էր, բերան համ էր առի, գնաց կանավ էն ծառու տակ, տեսավ հավքմը թռավ բնան միջեն։ Տղեն տեսավ օր հավք թռավ, ասեց. «Կարելի է ձագ ու մագ էղնին». շմփըլավ հ՝ելավ ծառ, տեսավ օր հ՝առջի օրվա հավկթի նման, հավկիթմ դրուկ էր հոտ։ Վերուց դրեց ծոց, հ՝իջավ էկավ։

Պապ ըզփետ կտրեց, էկավ իշվանք տաներ օր բառներ, տղեն ասեց.

— Աբո՛, հ՝երեկվան բանի պես բանըմ լէ հ՝էսօր իմ գտի։

— Դո՞ր է,— ասեց պապն։

Տղեն հանեց ծոցուց, ցուցուց պապուն։ Պապն օր տեսավ, շիտակ օր հ՝երեկվա հավկթի նման հավկիթ. տվեց տղին, դրեց ծոցք։ Քշեց ղիշվանք, էկավ փետերու խեչ, բառցավ, քշեցին էկան։ Էկան տուն։ Ըզտղեն թողեց մոր մոտ, ինք քշեց զուր իշվանք շուկեն օր փետ կծախեբ։

Մամ վաղեց, էկավ տղի հ՝առջև, տամռեր են։

Տղեն ասեց.— Մարե, ես հ՝երեկվան բանի պես բանմ լէ հ՝էսօր իմ գտի։

Մամն ասեց.— Վա՛ռ, բի տեսնամ։

Տղեն հանեց ծոցեն, տվեց մամու ձեռք, մամն առավ ղէդ հավկիթ մոտեն ու դեմ քշեց էն դուքան օր հ՝առջին հեղն էր գացի։ Տըվեց քսան օսկով, առավ ըղփարեն, գրեց ծոցք ու դառցավ էկավ։

Դուքընդար մեկ լէ ասեց.— Մորքուր, հոկուց շատ ունի՞ք, բերք, ես կառնիմ։

Կնիկն ասեց.— Հո՞ւստենէ պիտի էղնի մղիկ հոկուց. մեկ մեկ հեզ իմ տղեն կէրթա սար ու պապու հետ կգտնա, կառնե, կիգա։

Մարդ լէ փետ ծախեց, էկավ տուն։

Կնիկն ասեց.— Մարդ, զէն հավկիթ օր տղեն գտեր էր հ՝էսօր սար, մեկ լէ տարա ծախեցի քսան օսկու, առա ըղփարեն էկա։

Մարդն է վերուց ասեց.— Իմ տղի ըռըզխն է, աստված կիտա, հ՝որես բաց, հ՝ըմնօր պիտի առնիմ զիմ տղեն հետս, էրթամ սար։

Էդոնց նը գիշերվան սրթար կեր, նը ցերեկվան. էդ հավկիթներու գինն օր առան, էփեի կպան իրար, գացին շուկեն, առան ուրանաց ջուլ ու ջրվալ, հալավ, մալավ աղեկըմ կարքավորան, կտորմ հաց կուտեն։

Լուսուն հ՝ելավ մարդ էմլէ տվեց զուր օլըխներ հ՝առջև օր էրթեր սար, տղեն փեշեն կախվավ։

— Աբո՛, ես լէ կիգամ սար։

Վերուց դրեց իշու միջաց, քշին ու գացին, բանըմ չասեց տը-ղին, թե՝ կտանիմ, չրմ տանի։

Օր հասան մեշեն, զիշվանք թողեց չայիր տեխմ, տղին լէ ասեց.

— Դու կանի հ՝առեջ, ես կէրթամ կտրիմ փետ, կիդամ տա-նիմ, բառնամ էրթանք։

Մարդն օր գնաց փետ կտրելու, տղեն մեկ լէ էկավ ծառու տակ, պըշխլավ, իշեց ծառվընե, տեսավ օր հավքմ կա տափուկ էդ տեխ բնան մեջ։ Հուշիկմ հ՝ելավ ծառ, բըռնեց, չթողեց օր թռներ, դրեց ծոցք։

Պապն է, փետ օր կտրեց փըրթավ, պոռաց, ասեց.

— Տղա՜, տղա՜, քշ զիշվանք հ՝իգա, մութն է, բառնանք էր-թանք։ Քշեց, էկավ պապու խեչ, ասեց.— Աբո՜, իշքե տես, հ՝էսօր ես բանմ լէ գտեր իմ։ — Հանեց ծոցեն օր ցուցուց պապուն, պապ պաղ բերան մնաց։ Հըմալ հավք մրն էր օր փետուրներ արևու պես փելք կիտեն։

— Առ պահե՜, կանի իշվնու հ՝առշև, ես բառնամ։

Բառցան օր ճամբու հետ էկան, պապն ասեց.

— Տղա՜, լաո՜, տան ճամբախ դինա՜ս, գնա տուն, հարի ես էր-թամ շուկեն, զէդա փետեր ծախիմ ու հ՝իդամ։ Քու մամուն օր կցու-ցուս զէդ հավք, ուրին կասես. չէղնի տանե շուկեն ծախե, թըղ պա-հե մզիկ, մըր տան համար, ափսոս է, հ՝ըմեն մարդու ձեռք հըմլա բան չկպի։

Տղեն էկավ օր ուրանց տան դուռ հասավ, մամ վազեց, հ՝առշև։ Տղեն հանեց ըզհավք, ցուցուց։

Մամն ասեց. —Լաո, էդ ի՞նչ սիրուն բան իս գտի բերի դու հ՝էսօր։

Տղեն ասեց.— Մամո, իմ պապ կասեր չտանե ծախե։

Մամն ասեց.— Եր խայիլ չէ, հ՝որի՞ն կտանեմ ծախիմ, կվեր-ցունք մեր տան համար։

— Պապ լէ գնաց շուկեն, ծախեց դուր իշվանու բեռներ, դառ-ձավ էկավ։ էկավ օր մտավ տուն, կնկան ասեց.

— Կնի՜կ, տղի բերած հավք չտանիս ծախիս, ծախի՜ս, հանդե ես գինամ ու դու, ես կէրթամ սար ու ձոր, կարելի է մոլըրցուս զիս, տանիս ծախիս, հրմկա թանպիհ կէնիմ սորա չասիս՝ չասեց։

Էդ էրկու տղեկներն ին, էդ հավքուց հըմալ հազ կէնին, օր էն խդար չէղնի, էլ նը ուրանց պապու հ՝ետև կընկնեն, նը ուրանց մամուն, բռներ ին զէդ հավքն ու կանի։

11—1086

Պապ ուրանց հ՚ըմնօր նորեն կէրթա սար կիգա, ուր սանյատն էդ էր։

Հավքն է հ՚ըմնօր մեկ մեկ հավկիթ կածե ու էդ էնիկ կառնե կէրթա էդ դուքընդրին կիտա, կառնե ըզքսան օսկին ու կիգա։

Օր մը հ՚իրկուն էդոնց պապ սարեն գառցեր էր էկի, ինք ու կնիկ նստուկ են կժխլեն։

Վերուց ասեց.— Կնի՛կ, աղեկ, վատ մըր ձեռք մըր բերան կհասնի, էկո ըզմըր տղեկներ դնինք վարժատուն, էրթան կարդան։

Էդ հավքն է հ՚ըմնօր մեկ մեկ հավկիթ կածե, ու էդ կնիկ ուժտան կկրե, տանե իտա դուքընդրին ու զուր փարեն կառնե իդա։

Համալ էղավ օր մարդ զօլըխներու թարկ տվեց, զումոա հալ ու վախտիմ տեր էղավ։

Տղեկներ հ՚ըմնօր կէրթան վարժատուն կիզան, էփեի կարդալ էլ սորվեր ին։ Հ՚իրկվըներ օր կիգան, պապ ուրանց լէ կդառնա կիգա տուն, կինտանա վըր ուր ճժերուն, կգրկե, պաղնե, հ՚որի՞ն խելըմ վայելչութեն տեսավ։

Օր մը լէ հավկիթմ տարավ կիտեր դուքընդրին, դուքընդար հարցուց, ասեց.

— Հա՛յ կնիկ, էդ հավկթներ քզիկ հ՚ուստե՞ն են, օր հ՚ըմնօր կրերիս մեկ մեկ հատ կծախիս, կառնիս ըզքու փարեն, կէրթաս։

Կնիկն ասեց.— Էդ հավկթի ածողն մըր տուն է։

Ասեց.— Գնա զէն հավք ըի տեսնամ, էն ի՞նչ հավք է։

Կնիկ ու կարճամիտ. գնաց առավ ըզհավքն, էկավ։

Մարդն օր տեսավ ըզհավք, սիրտ կպավ հ՚ինք, ասեց.

— Կնի՛կ, քու մարդ զէդ հավք[1] չծա՞խե։

Կնիկ ասեց.— Չէ՛։

— Օր կծախե, հազար օսկի կիտամ, զէդ հավք տվեք ընձի։

Առավ, դառձավ, էկավ տուն։

Հ՚իրկուն մարդ դառձավ էկավ տուն։ Կնիկն ասեց.

— Մա՛րդ, մըր հավքուն հազար օսկի կիտան, չծախի՞նք։

Մարդն ասաց.— Հազար օսկի չէ, տաս հազար օսկի լէ տան, ես իմ տղեկներու հավք չըմ ծախի, իմ տղեկներ զուրանց սեր թալած ին վըր էդ հավքուն, սորա կդարտոտին։

Օլոր օր, մեկ լէ հավկիթ մը հ՚ելավ առավ էդ կնիկ, գնաց էն դուքընդրրի մոտ։

Դուքընդարն ասեց.— Կյալո, դու քու իրկաց հարցուցի՞ր, զէն հավք չծա՞խե։

---

1 Բն. հավկիթ (Ս. Կ.)։

Կնիկն ասեց.— Չէ, կասե՝ «Տաս հազար օսկի լէ իտա, չըմ ծախիս»։

Մարդն վերուց ասեց.— Կնիկ, զէդա դուքնի մալեր կտեսնա՞ս, հ՝ըմեն կիտամ քու օղուրին, էկո դեղ տուր ըզքու մարդն ըսպանե, ես կէլնիմ առնիմ ըզքդիկ։

Որ հասըլ, ըղկնկա խելք տարավ, ասեց.— Էրթամ տուն, վաղ կդառնամ հ՝իզամ սորա։

Դուքրնդար տվեց ըղհավկթի գինն, կնիկ առավ ու դարձավ էկավ։

Էկավ տուն, լուսուն հ՝ելավ հավկիթ մը լէ առավ, գնաց։

Դուքրնդար վերուց ըսեց.— Իմալ էրիք, խելքդ պառկա՞վ վըր իմ հ՝երեկվա ասածին, թը չէ, էկո ընձիկ անկաջ էրե ըզքու իրիկ ըսպանե, ես կառնիմ ըղքզիկ։

Կնիկն ասեց.— Էրկու տղա լէ կա ընձիկ, զէնգո՞նք ինչ կէնիս։

— Ի՞նչ կէնիմ, կրերիմ պահիմ, կէղնին մզիկ տղա։

Հ՝ելավ քիչմ դեղ տվեց կնկան, կնիկն հ՝ելավ առավ էկավ տուն։ Մարդն օր ջուր հ՝ուզեց խմեր, թալեց դեղ ջրի մեջ, տարավ տվեց մարդուն օր խմեր։ Մարդ լէ միամիտ խմեց, խմելու պես ալաֆ հ՝ընկավ ճիկար։

Ասեց.— Հա՛յ կնիկ, էդ ի՞նչ էր տվիր ընձիկ խմեցի, հըմկա ես կմեռնիմ, դնա զիմ ճժեր կանչե հ՝իգան վարժատնեն, տեսնամ քանի չըմ մեռեր ի։

Կնիկն հ՝ելավ վաղնելով, վազեց տղեկներու հ՝ետևեն։ Մարդ թըղ մնա ուր չարչարանքի մեջ։

Հասավ վարժատուն, ասեց.— Հայ տղա, էկեք հըմկա ձըր պապ կմեռնի։

Տղեկներ էկան հասան, բռնեց տղեկներու հ՝երսներ պագեց ու ասեց.

— Լաո՛, ես կմեռնիմ, ի՞նչ էր ձեռք տվեց ընձիկ, չըմ գինա, կցավամ օր դուք անտեր ու անտիրական էղնիք ուրիշներու դուռ ու փողան։

Մարդ մեռավ, բերին էրեց, տարան հորեցին։ Օր հորեցին խլըսան, քանիմ օր մնաց։

Կնիկ վերուց ասեց տղեկներուն.— Լաո՛, դուք առանց պապ չըք էղնի, ես կհ՝ուզիմ կարգվիմ, դուք կիգա՞ք իմ հետ, թը չիգաք։

Տղեկներ ասին.— Մարե, շուքըր աստծու, օղորդ օր մըր պապ մեռեր է, մզիկ գումռա հալ ու վախտ կա, դու հ՝որի՞ կկարգվիս, հեղմ մացի, տեսնանք ի՞նչ կէղնի։

Կնիկն ասեց.— Լաո, ես կկարգվիմ, չըմ մնա։

Տղեկներն ասին.— Մարե, մենք կասենք մը կարգըվի, օր կկարգվիս, ըզքու ձեռք ո՞ր պիտի ըռնե, մենք ամենքս ութ-տաս տարեկան էրեխա ինք, խոմ չընք մնա էդա փողցըներ, կիգանք քու հետ։

Կնիկն հ'ելավ գնաց կարգվավ, առավ զէդ դուքընդար, ըզտըղեկներ լէ տարավ հետ։ Կնիկն է, լուսուն կէրթեր դուքընդրի հետ դուքան առուտուր կէներ, հ'իրկուն կդառներ կիգեր։ Տղեկներ լէ վարժատուն կէրթեն կիզեն։

Օրերուց օր մը էդ դուքընդար հ'ելավ ասեց.

— Կնիկ, ես էսօր զէդա հավք կրռնիմ մորթիմ։

Կնիկն ասեց. —Հա՜յ մարդ, հ'որի՞ կմորթիս, իմ տղեկներու հավքն է, կիգան կմրմրան։

Մարդու վրեն չկառցավ, մարդն ասեց.

— Ահլավոկի կբռնիմ մորթիմ։

Տղեկներն է հ'իրկուն օր էկան վարժատնեն, մամ ուրանց հասկըցուց, ասաց թե.

— Էդա անաստված մարդ հ'էսօր ըզձըր հավք կբռներ մորթեր, ես չթողեցի, իմա՞լ կէղնի։

Տղեկներն ասին.— Մարե, մենք ի՞նչ կռնանք էնինք զալըմին, կըսինք չմորթե, մորթեց լէ ինք ու ուր աստված։

Հ'առտուն հ'ելան տղեկներ գացին վարժատուն, կկարգեն, մարդն հ'ելավ ասեց.

— Կնիկ, բի զէդ հավք մորթինք։

— Մարդ, էկո, զիմ ճժկընեռու հավքն մը մորթի, իմ տղեկներու պապ մեռեր է, մանցեր ին որբ, ուրանց սեր լէ վըր էդ հավքուն կբացվի, զէնդոնց սիրտ մ'կոտրի։

Մարդն ասեց.— Կմորթիմ, չարա չկա. քու տղեկներու սեր էդոր վըրե՞ն պիտի բացվի, հավքըմ է՝ կմորթիմ։

Հ'ելավ ըզհավքն մորթեց։ Տղեկներն վարժատուն են, դրռ չեն էկած։ Հ'ելավ մորթեց, ըզչանդակն ուրիշ տվեց էփել, ըզքարաճիկն, սրտիկն ու թոքեր լէ՝ ուրիշ, ասեց.

— Էնա շատ մեծ ամնիմ մեջ էփե, թրղ էղնի քու տղեկներուն, զէնա լէ պզտիկ ամնի մեջ, թրղ ընձիկ էղնի, բըլե իմ ամնի միջուն ուրիշի չի տաս ուտե։

Էդ տղեկներն կեսօրվան էկան վարժատնեն, անոթցեր են, նը մամն էր տուն, նը պապ։

Պզտիկ ախպերն ասեց.— Կանի տեսնամ բան չե՞ն էփած մըր

տուն, ուտենք էրթանք մըր վարժատուն, հարի մըր մամուն իշքինք, կհանգնան։ Իշքին օր մեկ մեծ, մեկ լէ փոքր պուտուկըմ կա թունդրան մեջ։ Ասեց պզտիկն մեծին.

— Էդա մեծ ամնին չուտինք, կիզան կհերսոտին, պզտիկ ամնեն ուտենք, էրթանք։ — Հանին սրտիկն, թոքն ու քարաճիկն կերան։ Օր կերան, հ'ելան գացին ուրանց վարժատուն։

Պապն ու մամն օր դարձան էկան կեսօրվան դուքնեն տուն, տեսան օր տղեկներ էկեր ին, հաներ ին ըզպզտիկ ամնի միջու քարաճիկն ու ճիկար կերեր ին։

Դուքընդարն ասեց կնկան.— Կնի՛կ, ըզքու ճժեր կմորթիմ, շատ անբարտավան ին, ես թանպիհ էրեր ենք, օր էդա պզտիկ ամնի մեշեն չուտեն, էկեր են հաներ են կերի ու գացի, իսկի չէ՝ թըղ իշքեն հար մենք հ'իդենք։

Հ'իրկուն օր տղեկներն էկան, էլ կնկա սիրտ չտարավ, ասեց.

— Լաո՛, էդա անաստված խաբեց զիմ բին լցեց, ըզձեր պապ դեղեց ըսպանեց, ըզձեր հավք մորթեց հերք չէ, հըմկա լէ դրեր է ընձիկ, կասե. «Ըղքու տղեկներ կմորթիմ». էկեք, ընձիկ օր կլսիք առեք ըզձեր գլուխ, փախեք գացեք դիովմ։

Հ'իրկուն օր մութ տվեց, բերեց զտղեկներուն մեկ մեկ հաց տվեց, հանեց քաղքեն դուրս, գրեց վրը ճամբուն ու դառձավ էկավ։ Էնդոնք բռնեցին ճամբախ ու գացին։

Դուքընդարն է լուսմթի օր հ'ելավ իշքեց տղա չկեր, ասեց.

— Կնի՛կ, քու տղեկներ ղո՞ր ին։

Կնիկն ասեց.— Ես ի՞նչ գինամ։

Մարդն ասեց.— Հ'որի չըս դինա, փախցուցեր իս, գացեր ին ուրիշ տեխ։

Հ'ելավ հագավ զուր հալավ ու ասեց.— Էնդոնք դոր էրթան, պիտի հ'ընկնիմ հ'ետևե ուրանց, բռնիմ, մորթիմ։

Հ'ընկավ ճամբախ ու գնաց, հ'ուր օլըրտավ, չկառցավ գտնա, դառձավ էկավ։

Կնիկն ասեց.— Մարդ, դու հ'որի՞ն կընկնիս իմ տղեկներու հ'ետևեն, զպապ ուրանց դեղ տվիր, զհավք ուրանց մորթեցիր էդ մասում էրեխե՞ք լէ կուզիս մորթել։

— Կնիկ, իմ մարամ քու տղեկներ չին, իմ մարամ էն քարաճիկներն ու սրտիկն էր, որն օր զէնի ուտեր, լուսուն հ'ելներ կտեսներ կոտմ օսկի ուր բարձի տակ լցուկ էր։ Տղեկներն օր բռնենք, մորթենք, հանենք զէնդոնց թոքերն ու սրտիկ ուտենք, էն օսկիք կիգեր ընձիկ, ախր փրցան գացին։

Տղեկներ փախան գացին չոլիմ ըռաստ էկան։ Չոլի գլուխ հ՝աղրուրմ կեր, անոթից պզտիկ ախպեր էդ տեխ ընկավ ու մնաց։

Էդ չոլի մոտ էլ մեծ քաղաքմ կեր, մեծ ախպերն ասեց.

— Ախպեր, դու նստի էդա տեխ, ես էրթամ էդա քաղաք, քիչըմ հաց ժողվիմ, բերիմ քզիկ, կի օր հանգ ու թախաթ էղնի քու օտքեր, հ՝ելնինք էրթանք։

Ախպեր գնաց էդ քաղաք, տեսավ օր էդ քաղքի թագավոր մեռիր էր. Տոլվաթ խուշին վիր դլխու վրեն նստի, ղէնի կէնին ուրանց թաղավոր։

Էդ Տոլվաթ խուշին ինչքան օր թողին, էկավ վըր էդ տղու գըլխու վրեն հ՝իշավ։ Իրեք հեղ թողին, իրեք հեղ լէ էկավ վըր էդ տղի դլխուն հ՝իշավ։ Տղեն լէ դացեր էր օր ախպոր հաց բերեր։

Էդ քաղքի մախլուխն է տեսան. օր ինչքան Տոլվաթ խուշին թողին, գնաց էդ աղի դլխու վրեն նստավ, բռնին էրին ուրանց թագավոր։

Տղեն է, թագավոր օր էղավ, զուր ախպեր մոռցավ, չասեց թե՝ ընձիկ ախպեր կա, բան կա, ճամբիմ բերիմ։

Էդ տղեն է հըմալ ըռամով թագավոր էղավ, օր ուր ամռալեն իսկի չէր էղի։ Եր նստավ թագավորական թախտի վրեն, բերեց զանգմ կախեց քաղքի հ՝օրթոլախ, ուր սարեսներու դեմ, ասեց.

— Վիրն օր դատ ու դատավորութեն կէղնի, թըղ հ՝իգա զէդա զանգ ղարկե, ես կբերիմ իմ հ՝առջև դատաստան կէնիմ, թըղ չմնա էրթա, ընկնի մախքյամի դռներ։

Էդ հըմալ էրեր էր օր զուր ախպեր գտներ։

Էդի թըղ մնա էդա տեխ, ուր թագավորութուն իշքե, մենք դառնանք վըր պզտիկ ախպոր։

Պզտիկ ախպերն է քնավ, հ՝ելավ տեսավ օր ախպեր չկա, ասեց. «Ջանըմ, իմ ախպոր ի՞նչ թըմավ օր չէկավ, ընձիկ երևան»։ Հ՝ելավ ու ճամբախ տվեց հ՝առջ, գնաց։ Գնաց օր, տեսավ ճամբում հ՝օրթոլախ, տեսավ իրեք մարդ կանուկ ին ճամբու մեջտեխ, հըմալ կզարկին հ՝իրարու օր չէղեր է։

Ասեց.— Ախպրրտանք, դուք հո՞րի զիրար կծեծիք։

Ասին.— Արի, մենք հ՝ըմնոր լէ զիրար հըմալ կը զարկինք, թե օր կառցար ըզմըզիկ հ՝իրարուց ջոկել, աղեկ, թե չէ՝ մըր հալն էդ է։

Ասեց.— Աղեկ, դուք ինչի՞ վրեն զիրար կծեծիք։

Ասին.— Էդա սուֆրի, քոլսի ու խալու վրեն կծեծինք զիրար։

Տղեն ասեց.— Էդա կտորմ սուֆրա է, էդա քոլոսըմ, էդա լէ խալիմ, ի՞նչ կա օր, պիթրշմիշ ջրք էղնի, հ՝իրարու մեջ, զիրար կծեծիք։

Վերցուց էնդոնցնե մեկն ասեց.— Էդ սուֆրի մարիֆաթն դինա՞ռ. ինչ է. էդ սուֆրի մարիֆաթն էն է, որ օր ասին՝ «Սուֆրա բացվի», կրացվի, ինչ տեսակ եմակ ասես կա մեջ, կուտինք։

Տղեն ասեց.— Շատ աղեկ, էդի սուֆրի մարիֆաթն է, էդա քոլսի մարիֆաթն ի՞նչ է։

Մեկ լէ վերուց ասեց.— Էդա քոլսի մարիֆաթն էն է օր, որն օր դնե ուր գլուխ, դողութենի էրթա, ուրիշին զարկե, ինչ օր էնե, ղէնի մարդ չտեսնա։

— Ըպա էդա խալու հունարն ի՞նչ է օր վրեն կկովիք։

Մեկ լէ վերուց ասեց.— Էդա խալու հունարն էն է օր, որն օր նստի վրը էնդոր ասե. «Զիս ֆլան քաղաք հանե», կտանե էն քաղաք կդնե։ Ըշթա մենք վրը էդորն է կկովինք, դու ի՞նչ ճամբախ կդնիս մրը հ՝առչև։ — Ասին.— Դիր ճամբախրմ, ինչ կդնես, դիր։

Տղեն ասեց.— Ես ձղիկ կրաժնեցում։

Վերցրին իրեք ախպերն ասին.— Ախպեր, մենք ըռղա ենք, էն օր հ՝ըմնօր զիրար ծեծինք, մեկ հեղ կրաժնվինք հ՝իբարուց. կփրթնինք, աղատինք։ Ասին.— Ախպեր, դու խելոք մարդմ կէրևաս, բաժնեցու ըզմդիկ հ՝իրարուց, իմալ կբաժնեցուա, բաժնե։

Տղեն ասեց.— Օր ես ձղիկ բաժնեցում, դուք իմ խոսքին ըռազի կէղնի՞ք։

Իրեք լէ մեկտեղ վերցին ասին.— Մենք քու խոսքից դուրս չընք հ՝ելնի, ինչ պատճառ կա օր ղքու խոսք չէնինք, ախըր մեկ մարդըմ պիտի ընկնի մըր մեջ, օր ըզմզիկ բաժնցու, էն լէ քու պես չէ՞։

Տըղեն վերուց ասեց.— Մադամ օր իմ խոսքով կէնիք, վազեք գացեք էդա սարու տակ, հոնկուց դարձեք վազման էկեք, որն օր շուտ էկավ, բանըմ վերուց թըղ էղնի էնդոր։ Հոնկուց վերջ՝մեկել էրկուք թըղ էրթան, վերջ ինչ օր մնաց, էն լէ թըղ էղնի գալացողին։

Իրարու ասին ըդոնք. «Տեսա՞ր խելոք մարդ, օղորդ կասեմ»։

Էդոնք հ՝ելան վազեցին հ՝ելան դին, տղեն հ՝ելավ ժողվեց ըզքոլոս լէ, սուֆրեն լէ, դրեց խալու մեջ ու նստավ հ՝ինք, ասեց.

— Խալի՛, քենե կհ՝ուզիմ օր զիս վերուս էդա աեխեն, ֆըլան քաղաք դնիս։

Էգ մարդիկ էնդիեն դառձան էկան, տեսան օր նը խալի կա, նը սուֆրա, նը քոլոս ու նը մարդ։

Ասին հ՝իրարու.— Տեսա՞ք, խելոք մարդ հըմլա կէղնի, մենք զիրար կծեծենք, դը գացեք ծեծեք։

Էկավ էդ քաղաք, գնաց պառվում դուռ հ՝իջավ ու էդ տեխ էղավ խոնախ, պառվուն ասեց.

— Նանե, նանե, խուրպան էղնիմ քզիկ, զիս չէ՞նիս քզիկ տղա։

— Լաո՛, ղաթի ընձիկ տղա չկա, դու էղնիս, հ՚որի՞ չըմ էնի։

Հ՚ելավ էղ պառվուն էղավ տղա, օրըմ նստուկ էր դուռ, տեսավ օր էդ քաղքի թագավորի սարի միջեն բանմ կէրևա։ Դառձավ էկավ, պառվուց հարցուց.

— Նանե, նանե, խուրպան եմ քզիկ, էդ ի՞նչ է էդա թագավորի սարի միջուց խորոտիկ բանմ կէրևա։

Պառավ կասե.— Լաո՛, քու բան ի՞նչ է կհարցուս, քզիկ դավի չկա էդ բաներուց։

Ինչ կէնե պառավ, տղի վրեն չկոնա, յալվարմիշ էղնելով ըզպառվու հ՚երսի հայեն կտանե։

Պառավ կվերցու կասե.— Լաո՛, ըսի քզիկ գործ չկա էդ տեսակ բաներու հետ, դու ընձիկ չավտրցար, քու մուր քու գլուխ էնի փաթե էն հրմալ խորոտիկ ախչիկ մըն է, օր Փարի կկանչեն։

Տղեն կասե ուր մտքի մեջ. «Կանի զէդա քոլոսի հունար լէ փորձեմ, էն մարդիկ կասեն քոլոս լէ հունարով է, մարդ օր դնե ուր գլուխ, օլըրտի, զինք չտեսնան, ես պիտի դնեմ զէդ քոլոս, հ՚ելնիմ էրթամ թագավորի սարեն էդ ախչկա խեչ»։

Դրեց գլուխ, հ՚ելավ գնաց, մտավ թագավորի սարի մեջ, գնաց ախչկա հ՚օդեն, տեսավ օր էդոր ջառյաներ չորս կողմ ջարուկ ին, ինք լէ նստուկ է մեջտեխ, ուտիս, չուտիս հմա զինք թամաշա էնիս, մարդ գինա զուր աչք ու ունք խալմով ին քաշած։ Մտավ ներս. ասեց. «Կանի զարկիմ էդ ախչկան, տեսնամ զիս կտեսնա՞, թե՞ չտեսնա»։

Էկավ կանավ ախչկա կուշտ ու գամբոսըմ հա՛յ, հա՛յ ախչկա փեճի վրեն։

Ախչիկն ասեց.— Հիսո՛ւս Քրիստո՛ս, ախչիկներ, ընձիկ զարկեցին։

Ախչիկներ ասին.— Յա՛, ո՛ր զարկեց քզիկ, մենք չտեսանք, մենք հ՚ուդա կանուկ ենք էղի, մարդ չընք տեսի, քզիկ մարդ չզարկեր է։

Տղեն մնաց հ՚ոդի կանուկ, ախչկա սիրուն օտք չբռներ օր էրթեր։

Մնաց օր կեսօր էղավ, ախչկներ հ՚ելան գացին ամեկ ուր տուն։ Մնաց թագավորի ախչիկ մինակ, ու տղեն լէ կանուկ էդ տեխ, ինք կտեսնա զախչիկ, ախչիկ չտեսնա զինք։

Կեսօր էր, ջառեք գացին առան փլավ, խազըմ լէ կարմրցուկ վրեն, առան էկան։ Դրին հաց օր կուտեր, տղեն նստավ մեկ դին կերավ, ախչիկ լէ մեկ դին ու ախչիկ չտեսնա զինք։

Ախչիկ հաց օր կերավ, դառձավ ֆքրավ, բան չմնաց լանկառու մեջ, ինքն ուրին ասեց. «Ջանըմ, ես ուրիշ օր կուտենք կմներ կրոնակ, հ'էսօր կերա սըրբըցուցի, բան չմնաց մեշ, կէղնի օր ես շատ անոթցեր ենք, ընկա իմ համդու հետ, կերա ու խապար չէղա»։

Հ'իրկուն օր էղավ, տղեն թողեց էկավ պառվու տուն։ Ասեց. «Խալին ու զքոլոս ճըրպեցի, հասկցա ղէտոնց հունար, հըմկա լէ ըղսուֆրի հունար փորձինք, տեսնանք էնի իմա՞լ է»։ Էկան նստան տղեն ու պառավ, տղեն ասեց. «Սուֆրա, արի ցած քիչմ հաց ուտենք»։ Պառավ տեսավ օր սուֆրեն ուր օտքով հ'ելավ էկավ ու բացվավ, ինչ թուղու եմակ ասիս մեջն է։ Կերան, կշտացան, ժողվավ գնաց ուր տեխ նստավ։

Պառավն ասեց.— Աղեկ է, էլ հ'որի՞ թունդիր վառինք, հափ հաղր էփուկ ու հաղրուկ կիդա մըր հ'առեշ, կուտինք։

Հ'իրկուն մութն օր տվեց, տղի սիրտ բռներ էր զախչիկ, ըղքոլոսն գրեց գլուխ, հ'ելավ գնաց ախչկա խեչ։

Գնաց օր տեսավ թագավորի ախչկան հաց բերած են, կուտեն, նստավ ախչկա հետ պարենպար հաց կերավ։ Ախչիկն տեսավ օր էն դին դրհա շուտ կդարդկվի, դրա լոխմեն չկերեր է, էնդիեն էրկու-իրեք լոխմա կտանին, հասկցավ փերի էր, ասեց.

— Հա՜յ մարդ, գու ո՞րն իս, օր էնգահ լէ դրրպրմ զարկիր, իմ փեճին ու էղա էրկու հեղ նստուկ իս հետ ընձի հաց կուտիս։ Թե օր դու տղամարդ իս, էլի աշինք, էլ հ'որի՞ն հըմլա կէնիս իմ գըլուխ։

Տղեն է, քոլոսն դրեց ծոցք, հ'ելավ նստավ ալենի-ափաշքարա ախչկա կուշտ, գիշեր էր, մարդ չկեր ախչկա մոտ։

Ախչիկն ասեց.— Անաստված, գու հ'որի՞ կզարկեր ընձիկ-ալենի թըղ հ'իդեր իմ մոտ, ո՛ր ինչ կասեր քզիկ, կզարկեր ընձիկ-պալքիմ ես վախենենք դարդիմ տեր անենք։

Տղեն լէ հըմալ խորոտիկ էր, օր իսկի թայ չկեր։ Ախչիկն օր տեսավ զտղեն, ասեց.— «Հըմլա բան լէ կէղնի, ես պիտի հ'ելնիմ առնիմ զէդ տղեն, հոկուց խորոտի՞կմ պիտի գա ընձիկ ըռաստ»։

Ասեց.— Տղա, դու ընձիկ, ես քզիկ։

Տղեն ասեց.— Դու օր կհ'ուզիս, հազ կէնիս, ես կհուզիմ ու հ'ուզիմ, զաթի ես քզիկ հ'ապով իմ էկի։

Ախչիկն ասեց.— Հ'ելի էսօր գնա քու տուն, քանի օր մըր խոսք մեկ է, վաղ ճամբե ըզքու մամ իմ պապու խեչ՝ հ'ուզե. մնաս իմ խեչ, ես կճժովնամ, սորա կհ'ելնիմ, իմ պապ կասե.— «Իմ ախչիկ բոզ է»։

Ինչ էրեց, տղեն չգնաց, գիշեր մնաց ախչկա մոտ, գրկեցին զիրար ու պառկան։ Օրըմ չէ, էրկու չէ, իրեք, չորս օր մնաց ախչկա մոտ, օր մը լէ ասեց. «ես պիտի առնիմ զէղա ախչիկ, դնիմ խալու մեջ ու առնիմ էրթամ ուրիշ էրկիր, հ՚ուզելով չպիտի էնիմ, քանի օր փախցնել կա մեջտեղ, ի՞նչ պիտի էնին ընձիկ»։ Հ՚ելավ գնաց, առավ ըղխալին, զուր սուֆրեն, էկավ տեսավ օր ախչիկ քնուկ էր, վերուց դրեց զախչիկ խալու մեջն ու ասեց.

— Խալի, ըղքզիկ կհ՚ուզիմ օր ծովու հ՚օրթոլախ չոր տեխըմ դնիս ըզմզիկ։

Խալին է տարավ, ծովու հ՚օրթոլախ չոր տեխըմ դրեց։

Ախչիկն օր հ՚իմցավ, իշքեց տեսավ օր նը սարալի կա, նը քաղաք, չորս դին ծով, հ՚օրթոլախ չոր, ինք ու տղեն մեջտեղ նըստուկ ին։

Դառձավ ասեց.— Հա՜յ, անաստված տղա, դու իմա՞լ դիս իմ պապուց, մամուց էրիր, բերիր թալեցիր անոթի ծառավ հ՚ոդա։

Տղեն ասեց.— Կնի՜կ, քզիկ ինչ գործ կա, կէրթաս քաղաք տեխ, հալպաթ ես բանմ գինամ, անոթի ծառավ չընք մնա, մը վախենա։

Հ՚ելան ակրըդի գահ էր, տղեն ասեց.— Սուֆրա, արի հաց ուտինք։

Ախչիկն տեսավ օր սուֆրեն քելեց էկավ ու ուրանց հ՚առեջ բացվավ, ինչ տեսակ զատ ասես մեջ կեր։ Կերան, կշտացան, մեկ լէ սուֆրեն ծալվավ, գնաց ուր տեխ նստավ։

Զէդ օր տեսավ ախչիկ, գիտցավ էդ տղի տակ շատ բան կէր։ Ասեց. «Կանի տեսնամ իմա՞լ է դիս բերի էդա տղեն, էդա տեխ»։

Ասեց.— Մա՜րդ, շատ աղեկ, հաց հասկցանք, սուֆրեն կբերե մը հ՚առջև, կուտինք, ըպա էնի ի՞նչ բան է օր կիգաս դու իմ խեչ ու չրս էրևա։ — Բաներ կքընքըներ տղից։

Տղեն ասեց.— Էդա խալին կտեսնա՞ս, էդա խալու վրեն նրստինք ու ասինք՝ «Հանե ըզմզրկ ֆըլան տեխ», հ՚ուր հ՚ուզինք, հ՚ոնի կհանե ըզմզիկ։ Էդա քոլոս լէ մարդ ուր գլուխ դնե, մարդ զէնի չտեսնա։

Քանիմ օր մանցին էդ տեխ, ինչքան օր լուսում կհ՚ելնեն, կտեսնեն օր կոտրմ օսկի լցուկ է տղի գլխու տակ, զէդ օսկիք քանի հոդ են ժողվեցին, էղավ էրկու-իրեք բեռ։

Կնիկ մեկ լէ չավտրներ օր խալին է բերի զուրանք, ասեց.

— Մա՜րդ, էկո զօղորդն ասա, ըզմզիկ ո՞րն է բերի էդա տեխ։

Տղեն ասեց.— Չէ՜, հ՚ընցած օր ասի քզիկ, էդա խալու վրեն

նստանք էկանք։ Հըմկա էդա խալու վրեն նստինք, հ՚ուր հ՚ուղինք կտանե ըզմըղիկ։

Եր օր ղըմեն բան հասկցավ էդ կնիկն է, գիշերըմ հ՚ելավ նստավ վըր իալուն, առավ ըզտղի քոլոսն ու սուֆրեն, դրեց խալու մեջ, ասեց. «Խալի, քենե կհ՚ուզիմ, օր զիս հանիս իմ պապու էրկիր»։

Խալին տարավ էդ ախչկա պապու քյոշկի մեջ, դրեց ուր հ՚օդեն, նստավ։

Տղեն մնաց էդ տեխ քնուկ։ Տղեն է լուսուն օր հ՚իմցավ, տեսավ նր կնիկ կա, նը խալի, նը քոլոս, նը սուֆրա։ Կնիկն առեր է ղըմեն, էկի։

Տղեն մարախից կպատռեր, օղմըկավ վըր կշտին, քուն տարավ, քնավ։

Էրկու հավք էկան վերևով հ՚ընցան, ասին իրարու.

— Գինա՞ք, էդա տղեն ինչ տղա է. էդ տղեն էն է օր սարեն բռնեց ըզմըր քուր, առավ դնաց. խոզի հ՚իմաց էղներ, թեփուրմ կթալենք, իտեր կրակ, ծովուց կփրցներ, էրթեր հասներ ուր մուրազին։

Տղեն քնու մեջ լսեց զէդ հավքերու ասածներ, հ՚ելավ օր թեփուրըմ հ՚ընկուկ է ուր կուշտ, տվեց կրակ, գնաց չորային տեխմ հ՚ընկավ, ծովուց փրցավ։ Օր էկավ չորային, անոթի ծարավ էր, հ՚ընկավ բաղ ու բաղչի մեջ, էդ տեխ խնձորի ծառ կեր, փրթուց խնձորըմ կերավ, տեսավ օր էղավ գոմեշըմ։ Խնձորի կեսն էր ֆերի։

Հ՚ելավ ուրիշ ծառուցըմ խնձորմ փրթուց կերավ, ասեց. «Տեսնամ ի՞նչ կէղնի»։ Էղավ, հեռի լսողաց մոտեն, օլախըմ, կանավ էն դին, ասեց. «Հե՜յ, աստված, էդ ի՞նչ է կիգա վըր իմ դլխուն». հոնկուց թողեց զէն ծառ, էկավ էս դին, ուրիշ խնձորմ փրթուց կերավ, դառնավ իսան։ Էդ օր դառնավ իսան, ասեց. «Էդի աստծուց օր, զէդա ընձիկ ցուց տվեց հեռի լսողաց, ես պիտի փրթում էդա էշ էնող ծառու խնձորից քանիմ հատ տանիմ, էրթամ դտնամ թագավորի ախչիկն իտամ ուտե, էղնի էշ, հ՚ելնիմ հեծնիմ»։ Փրթուց գոմեշ, էշ, մարդ էնող ծառերու խնձորներեն, քանիմ խնձոր ըցեց տասմըլի մեջ ու առավ էկավ։

Եր բերեց զէդ խնձորտանք, մեկ խնձորի դին դրեց հազար օսկի, օր ուրիշ մարդ չառնե, մինակ թագավորի ախչիկն առնե։

Էկավ, գնաց թագավորի սարի հ՚առջև դրեց, թագավորի ախչրկա ջառեք տեսան, գացին ասին թագավորի ախչկան, թե.

— Ինչ խորոտիկ խնձորներմ էկեր ին քու փանջարի հ՚առջև կծախվին։

Ճամբեց ըզչառեք, ասեց.— Գացեք, տեսեք իմա՞լ կիտաս. քանիմ խնձոր գնեք, առեք էկեք ընձիկ։

Էկան շառեք տղի մոտ, ասին.— Իմա՞լ կիտաս, տղա, զէդ խնձորտանք։

Տղեն ասեց.— Դուք չկառնաք զիմ խնձորտանք առնիք, մեկ խնձորի զին հազար օսկի է։

Գացին թագավորի ախչկան ասին, թե մեկ խնձոր հազար օսկի կասե։

— Հա՜յ մարդ, էդ ինչ տեսակ խնձոր է օր ըզմեկն հազար օսկի կասես, հեչ մարդ լսե՞ր է, մեկ խնձորն հազար օսկի էղնի։

Տղեն ասեց.— Ես հըմալ կիտամ, կհ՚ուզիս առ, կհ՚ուզիս մ՚առնի։

Ախչիկն ասեց.— Օր հըմալ է, հատմ թալ վի, տապակմ ուտիմ, տեսնամ համ ի՞նչ է, իմ մոտ փարա շատ կա, կիտամ կառնիմ։

Տղեն խնձորմ թալեց վի, օր ախչիկ կերավ, տեսավ դառձավ դումեշմ, էրկու կոտոշ վըր ճակտին, ինչ էրեց գլուխ փանճարից ներս չմտավ։

Ասեց.— Ցա՜, էդա ի՞նչ է։ Ինք ուրին քիչմ ֆքրավ. ասեց. «Կա ու չկա, էդա իմ մարդն է, փրթեր է էկի»։

Ասեց.— Հա՜յ մարդ, դու զիս էդա տեխեն փըրցու, ես քզիկ, դու ընձիկ։

Մարդն ասեց.— Քու տեխն էդ է, քու հոգին հ՚ելնի, պիտի մնաս հըմա հըմալ, հ՚ոնի շմփլով։

Ախչիկն ասեց.— Մարդ, դու ու քու աստված, ես էրեր իմ դու մ՚էնի, թաքիլան զիս էդա տեխեն փըրցու, ի՞նչ կհ՚ուզիս, կիտամ, քու խոսքեն դուրս պիտի չէնիմ։

Տղեն ասեց.— Բի զիմ հուր ու մուր, ըզխալին, ըզսուֆրեն և ըզքոլոս տուր, քզիկ օր փըրցում, թը չէ՝ չըմ փըրցու։

Ախչիկն ասեց.— Առ քու հուր ու մուրն, փըրցու զիս։

Բերեց հուր ու մուրն տվեց, ըստհաղ բերեց օլըխի խնձորն տվեց կերավ, էղավ խորոտիկ օլախմ, օր իսկի չըր էղի, հեռի լսողաց մոտեն, էղավ սիրուն օլախմ, կոտոշներ փըրցան, գլուխ գնաց ներս։ Էդ քառսուն շառին տվեց էդ խնձորից, հ՚ըմեն էղան էշ։

Քառսուն տղա բռնեց էրեց բազրկան, ու զէդ օլըխներ տվեց հ՚առշև ուրանց, ու հ՚ընկան քաղքներ էդա քաղքեն, էդա քաղաք, էդա քաղքեն էդա քաղաք։

Տղեն ասեց. «Ուխտ էղնի օր ղէնի հրմլա իշու պես քանի սաղ է պիտի օլբրցում, հար հոգին հ'ելնի»։

Էդ իշվընեբու կող ու կուշտն է հրմալ ծակավ, օր իսկի չէր էղի, արուն հ'ելեր էր կէրթեր։

Տղեկները չդիտեն ինչ էր. ի՞նչ դինեն, մշակ են։ Թե շատ, թե քիչ օլբրտան, գացին ուր ախպոր քաղաք օր զանգ կախեր էր քաղքի հ'օրթոլախ, վերն օր դարդմ կէղնի, էրթա ղարկե զէդ զանգրն ու դանգտի հելնա դուրս։ Էդ խորոտիկ էշն օր թագավորի ախչիկն է, դնաց զինք զարկեց էդ ղանդ։

Զանգ օր զարկեց, ձեն էլավ, էկան թագավորի ասքրներ բրոնին առան գացին թագավորի մոտ։ Առան տարան խորոտիկ էշմ, տեսան օր կուշտ ու կող ծակոտեր է, արուն հ'ելեր է կէրթա, հասկրցավ թագավոր իշու դարդն ինչ է։ Ճամբեց զուր ասքրներ. ասեց.

— Գացեք, բերեք տեսնամ որն է էդոր բառցողն օր զէդա հայվնի կուշտ ու կողն հրմլա բրրինդրրիր է։

Գացին զէդ տղեն՝ քարվանճի բաշին առան էկան. օր առան էկան, թագավորը վերուց ասեց.

— Քարվանճի բաշի, էդ հ'որի՞ն զէդա հայվնի կուշտ ու կող էրեր իս յարա, մարդ հրմալ կբառնա՞ զհայվան։

Քարվանճի բաշին վերուց ասեց.— Թագավոր ապրած, դու զքու ասածն ասիր, ընձիկ լէ կիտաս հրաման խոսամ։

— Հ'որի՞ չէ, լաո՛, դու լէ խոսա։

— Թագավոր ապրած, իմ պապ հրմալ մարդ մընէր օր ուտեր չուտեր, կուշտ չուտեր. ես պզտիկ ենք, գացի իմ պապու հետ սար հավկիթմ գտա բերի, ծախեցինք, առանք մզիկ հաց, մեկն էղավ իրեք ու չորս, վերշ զէդ հավկթու[1] տերն էլ բռնի բերի։

Թագավորն հասկցավ օր ուր ախպերն է։

Էդ տեխ մեկիկ մեկիկ կպատմե զուր գլխու գալածն[2] ու թագավոր անկաճ կէներ։

Եր էլավ վերշացուց զուր հեքիաթն, ասեց.

— Էդա էշ, թագավորի ախչիկն է ու մեկել քառասուն լէ էնդոր շառեքն ին, ես իմ էրի էշ, երբոր էդի հրմալ օղիաթ խաղցավ իմ գլուխ։

Թագավորն հասկցավ օր ուր ախպերն է, հ'ելավ փաթվավ վիզ ու խընդացավ, ասեց.

---

1 Բն. հավքու (Ծ. Կ.)։

2 Հոս հեքիաթ ասողն հեքիաթն վերստին սկզբեն կրկնեց (Ծ. Բ.)։

—Ախպեր, դու իմ ախպերն իս։ Էդ Թագավորն էլ զուր գլխու դալած պատմեց։

Էդ տեխ բերեց իսանի խնձոր տվեց էդ ախչկան ու իր ջառեսներուն, դարձան իսան։

Ըզջառեք տվեց ամեկ մեկ տզին մեկ, ինք լէ առավ զուր կընիկ ու էղավ սատրազամ ուր ախպոր։

Աստծուց իշավ իրեք խնձոր. մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ անկաճ էնողին։

Էդոնք հասան ուրանց մուրազին, դուք լէ հասնիք ձըր մուրազին։